ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024թ. օգոստոսի 16-ին թողարկված՝ «Երևանի էներգաարդյունավետության ծրագրի» շրջանակներում **“Երևան քաղաքի հասարակական շենքերի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում (բաղկացած 4 լոտից)”** **ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01** ծածկագրով մրցույթի Հայտերի Ներկայացման Հրավերով (ՀՆՀ) և Մրցութային Փաստաթղթերով սահմանված

Հայտերի ներկայացման նոր վերջնաժամկետի մասին

Հիմք ընդունելով վերոհիշյալ Մրցութային փաստաթղթերի **«Հրահանգներ Հայտատուներին» 8.1, 8.3, 17.1 և 17.2 կետերը**, **2024թ. օգոստոսի 16**-ին Երևանի քաղաքապետարանի վեբ կայքում (https://www.yerevan.am) և ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում (https://gnumner.minfin.am) հրապարակված «Հայտերի Ներկայացման Հրավերի (ՀՆՀ)» 10-րդ տողում՝ **«Հայտերի ներկայացման վերջնաժամկետ - 2024 թվականի սեպտեմբերի 20; ժամը՝ 15:00 (Երևանի ժամանակով)»** կատարվել է փոփոխություն, որի արդյունքում ՀՆՀ-ի այդ տողը **այսուհետ կարդալ հետևյալ խմբագրությամբ**.

- **«Հայտերի ներկայացման վերջնաժամկետ - 2024 թվականի սեպտեմբերի 26; ժամը՝ 15:00 (Երևանի ժամանակով)»**;

Մրցույթի շահագրգիռ իրավասու հայտատուները կարող են **անվճար** ստանալ մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը (միայն էլեկտրոնային տարբերակ) **հայերեն լեզվով**՝ ներառյալ Մրցութային փաստաթղթերում կատարված «Փոփոխությունները» և մասնակիցների կողմից ստացված պարզաբանումներն ու Պատվիրատուի պատասխանները՝ ներկայացնելով գրավոր դիմում(*) ներքոհիշյալ հասցեով՝ խնդրելով տրամադրել ***«Երևան քաղաքի հասարակական շենքերի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01*** ծածկագրով մրցութային փաստաթղթերը (մրցութային փաստաթղթերը կուղարկվեն մրցույթի շահագրգիռ մասնակիցներին ֆայլերի փոխանցման էլ.համակարգի միջոցով):

Հայտատուն պետք է հոգա իր Հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը: Պատվիրատուն ոչ մի պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցութային գործընթացի ընթացքից կամ արդյունքից:

Վերը նշված հասցեն է՝

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)
Ում՝ Մարտին Չարյանին, «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գնումների մասնագետ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010, Փ.Բուզանդի 1/3
Հարկ/Սենյակ՝ 6 հարկ, 618 սենյակ
Հեռ՝ (+374 11) 51-50-07 (ընդունարան)
(*)Էլ.փոստ (գրավոր դիմումի համար)՝ martin.charyan@yerevan.am; cc: narine.gyoletsyan@yerevan.am; m.harutyunyan@yerevan.am

2024թ. օգոստոսի 16-ին թողարկված Մրցութային փաստաթղթերի (ներառյալ Մրցութային փաստաթղթերում կատարված փոփոխությունները), ինչպես նաև ՀՆՀ-ի մյուս բոլոր պայմանները և դրույթները մնում են անփոփոխ: